

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության 2019թ-ի ինն ամիսների ընթացքում
իրականացրած գործունեության վերաբերյալ**

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը բաղկացած է 11 տարածքային մարմիններից, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության մարզերում /թվով 10/ և Երևան քաղաքում: Մարզային բաժիններն ունեն 27 նստավայր:

Պրոբացիայի ծառայությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված քրեական պատիժներ՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, իրականացնում է վերահսկողություն պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը պայմանականորեն չկիրառված և հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կամ այլ հիմքերով պատիժը հետաձգված անձանց նկատմամբ, ինչպես նաև կազմում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներին ներկայացնում է զեկույցներ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ:

Ծառայությունում 2019թ-ի 9 ամիսների ընթացքում գրանցվել են հետևյալ քանակությամբ պատիժներ և վերահսկողություններ, զեկույցներ՝

	Պատիժների և վերահսկողությունների տեսակները և քանակները							Ընդամենը
	Տուգանք	Որոշակի պաշտոններ	Հանրային աշխատանք	Պատիժը պայմ. չկիրառել	Վարքի վերահսկ.	Պատժից պ/վ ազատել	Պատժի հետաձգում	
2018թ.-ից փոխանցված	511	298	178	1278	3	40	12	2320
2019թ.-ին ստացված	263	122	27	261	2	137	1	813
Ընդամենը	774	420	205	1539	5	177	13	3133

Զեկույցներ	
2018թ.-ից . փոխանցված	493
2019թ.-ին . ստացված	475
Ընդամենը	968

Ծառայությունում 2019թ-ի 9 ամիսների ընթացքում հաշվառվել է 2977 շահառու, որոնցից 231-ը կանայք են, 34-ը անչափահաս, իսկ 23-ը օտարերկրյա քաղաքացիներ: Նրանց նկատմամբ նշանակվել է 1381 պատիժ, 1734 վերահսկողություն, ընդ որում 138 շահառու ունի կրկնակի պատիժ կամ վերահսկողություն:

«ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ստացվել է զեկույց տրամադրելու վերաբերյալ 968 ծանուցում, որոնցից 32-ը կանայք են:

Ծառայությունում 2019թ-ի 9 ամիսների ընթացքում արխիվացվել է 1822 անձնական գործ, որից 166 զեկույց, ընթացքի մեջ է 2123 անձնական գործ, որից 802 զեկույց:

1. Տուգանք. 774 շահառուի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակի ընդհանուր գումարը կազմում է 324.851.150 ՀՀ դրամ, որից 117 տուգանքը փաստացի կատարվել է, փաստացի գանձված գումարը կազմում է 49.081.300 ՀՀ դրամ, իսկ մասնակի գանձվել է 7.874.100 ՀՀ դրամ, ընդհանուրը 56.955.400 ՀՀ դրամ: 266 տուգանք գտնվում է միջնորդություն ներկայացնելու ժամկետի մեջ, որոնց գումարը կազմում է 105.148.850. ՀՀ դրամ, 76 տուգանք տարաժամկետով է, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 24.695.800 ՀՀ դրամ, 12 տուգանքի կատարումը հետաձգվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 5.985.000 ՀՀ դրամ, 3 տուգանքի կատարումը կասեցվել է, որոնց գումարը կազմում է 1.700.000 ՀՀ դրամ (բողոքարկված է), 37 շահառուի մոտ տուգանքի կատարումը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով (կալանավորվել են), ընդհանուր գումարը՝ 19.022.000 ՀՀ դրամ, 245 տուգանք կարճվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 102.414.100 ՀՀ դրամ (4-ը մահ,22-ը վաղեմություն, **219-ը համաներում**):

Ծառայությունում փաստացի ընթացքի մեջ է 358 տուգանք, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 137.529.650 ՀՀ դրամ:

774 տուգանք պատժից 68-ը նշանակվել է կանանց, 1-ը անչափահասի, իսկ 5-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

Տուգանքի դատապարտված 7 անձ համարվում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ, 4-ը՝ գտնվում են զինվորական ծառայության մեջ, 7-ը՝ կենսաթոշակային տարիքի են, 39-ը՝ գտնվում են հետախուզման մեջ:

2. Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակաշրջանում հանրային աշխատանքների ձևով պատիժ է նշանակվել 205 շահառուի նկատմամբ, որից 69 անձնական գործ գտնվում է ընթացքի մեջ և որոնցից ներկայումս աշխատում են 22-ը, 15-ի վերաբերյալ կնքվում են պայմանագրեր, իսկ 32-ը՝ չեն աշխատում (10-ը հետախուզում, 9 -ի վերաբերյալ ներկայացվել է պատիժը փոխարինելու վերաբերյալ միջնորդություն, 10-ը բողոքարկվել է վերաքննիչ դատարան, 3-ը պատիժը ըննհատված է), 25 հանրային աշխատանքներ փաստացի կատարվել են, 52-ի պատիժը կասեցվել է (52-ը գտնվում են ազատագրկման մեջ), 38-ի պատիժը կարճվել է (2-ը մահ, 1-ը դատարանի որոշմամբ, 33-ը համաներում, 2-ը վաղեմություն), 15 շահառուի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով (կալանավորվել են), 6 շահառուի նկատմամբ նշանակված

հանրային աշխատանքները բաժնի միջնորդության հիման վրա փոխարինվել է ազատագրկմամբ:

205 հանրային աշխատանքներ պատժատեսակից 7-ը նշանակվել է կանանց նկատմամբ իսկ 1-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

Հանրային աշխատանքներ պատժատեսակի իրականացումն ապահովելու և այն առավել հանրօգուտ դարձնելու նպատակով Պրոբացիայի ծառայության բաժինները համագործակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքվում են պայմանագրեր, հետագա գործընթացի կազմակերպման նպատակով:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ կրող շահառուների թիվը կազմում է 420, որոնցից 282-ի գործերը գտնվում են ընթացքի մեջ, հաշվառումից հանվել են 128 շահառու՝ պատիժը փաստացի կատարելու հիմքով, 5-ը կասեցված է դատարանի որոշմամբ, 3-ի անձնական գործ կարճվել է՝ 2-ը շահառուի մահվան հիմքով, իսկ 1-ի նկատմամբ կիրառվել է համաներում, որպես հիմնական պատիժ:

420 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 39-ը նշանակվել են կանանց նկատմամբ, իսկ 4-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

420 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 284-ը վերաբերվում են տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելուն, իսկ 138-ը՝ այլ գործունեությունից:

4. Վերահսկողություններ. 1539 շահառուի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան, որոնցից ընթացքի մեջ են 430-ը, 213-ի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվել է, 873-ի փորձաշրջանը կարճվել է (2-ը նոր դատավճիռ, 4-ը մահվան հիմքով, 42-ը օրենքի փոփոխությամբ, 825-ը համաներմամբ), 17-ի նկատմամբ փորձաշրջանը դադարեցվել է նոր հանցանք կատարելու հիմքով (կալանավորվել են), 6-ի փորձաշրջանը վերացվել է բաժնի միջնորդության հիման վրա:

1539 փորձաշրջանից 120-ը նշանակվել են կանանց, 24-ը՝ անչափահասների, իսկ 6-ը օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ:

Փորձաշրջանի մեջ գտնվող 14 շահառու զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության, իսկ 35 շահառուի անձնական գործերը ստացվել են ՀՀ ՊՆ տարբեր զորամասերից:

Վերահսկողությունից խուսափող 27 շահառու գտնվում է հետախուզման մեջ:

- Ծառայությունում հաշվառված 5 անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կիրառվել է **դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց:**

- Ազատագրկման ձևով նշանակված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված** դատապարտյալներից պրոբացիայի ծառայությունում, ըստ ստացված որոշումների, հաշվառվել է 177 շահառու, որոնցից 96-ի նկատմամբ վերահսկողությունն ընթացքի մեջ է, 37-ը՝ փաստացի ավարտվել է, իսկ 3-ի շահառուի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա (կալանավորվել են), 39-ի վերահսկողությունը կարճվել է (1- մահվան հիմքով, 36 շահառուի նկատմամբ կիրառվել է համաներում և նրանց նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է, 1-ի պատժից պայմանականորեն վաղաժամկետ ազատելը վերացվել է, վերաքննիչ դատարանի որոշմամբ, իսկ մեկ օտարերկրյա քաղաքացու վերաբերյալ ստացված որոշումը փոխանցվել է ԻԻՀ, ըստ բնակության վայրի վերահսկողություն իրականացնելու նպատակով), 2-ի պատժից պայմանականորեն վաղաժամկետ ազատելը վերացվել է, բաժնի միջնորդության հիման վրա :

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածներից 167-ը տղամարդ են, 10-ը կին, տղամարդկանցից 2-ը հանդիսանում են օտարերկրյա քաղաքացի:

- Պրոբացիայի ծառայությունում հաշվառված են **պատժի կրումը հետաձգված** 13 շահառու, որոնցից 12-ի պատիժը հետաձգված է հիվանդության պատճառով, 1-ը ունի խնամքին մինչև 3 տարեկան երեխա:

Պատժի կրումը հետաձգված 4 շահառուի անձնական գործերը գտնվում են ընթացքի մեջ, 9 շահառուի նկատմամբ վերահսկողությունը կարճվել է՝ 1-ը վաղեմության հիմքով 1-ի պատժի հետաձգումը վերացվել է և կիրառվել է ազատագրկում, իսկ 7 շահառուի նկատմամբ կիրառվել է համաներում:

Պատժի կրումը հետաձգված 13 շահառուից 11-ը տղամարդ են, 2-ը կին, իսկ 1-ը հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի և գտնվում է հետախուզման մեջ:

Ձեկույց

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցներ տրամադրելու վերաբերյալ 968 անձնական գործերից, 475 ծանուցումները ստացվել է 2019թ-ի 9 ամիսների ընթացքում:

Ներկայումս ընթացքի մեջ է 802 անձնական գործ, 166-ը գործ արխիվացվել է: Ծառայության կողմից 750 զեկույցներով ներկայացվել է եզրակացություն՝ (235-ը դրական, 515-ը բացասական), դեռ չի կազմվել 113 զեկույց, ընդ որում 61 դատապարտյալի վերաբերյալ ստացվել է կրկնակի ծանուցում: